02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

35 (1434) • 20 սեպտեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Սեպտեմբերի 21-ի խորհուրդը

Երբ 1991-ին ազգովի անկախության որոշում էինք կայացնում, գիտեինք, որ ավելի վաղ՝ արդեն 88-ին էինք ստանձնել մեր իրավունքն ու պատասխանատվությունը, գիտեր Հայաստան-Արցախի ողջ պարագծով խրամատներում կանգնած աշխարհազորը, գիտեր հպարտ համառությամբ պատերազմ, կորուստներ ուսած մեր ժողովուրդը:

Հայաստանի ոստիկանությունը եւս այդ որոշումը կայացրել էր 1988-ի փետրվարին՝ կանգնելով ժողովրդի թիկունքին:

Ոստիկանությունը մի՛շտ է պետության հիմնասյուն ու պետականության կրող եղել: Արցախյան ազատամարտի տարիներին հենց ոստիկանության կանոնավոր ստորաբաժանումներն էին ուս ուսի կռվում աշխարհազորայինների հետ: Հենց ոստիկանությունն էր, մարտական հերթապահության հետ մեկտեղ, երկրի ներսը մաքրում հանցավոր զինված տարրերից՝ ապահովելով ռազմաճակատի թիկունքը եւ թիկունքում՝ ժողովրդի անվտանգությունը: Պետական մտածողության կրող էր, երբ ձեռնարկեց համակարգի արդիականացման, կատարելագործման, ինքնամաքրման գործին, որովհետեւ ապահովության երաշխավորը մի քայլ առաջ պիտի անցնի զարգացումներից:

Ոստիկանության որոշումը մեկն է եւ՝ ո՛ղջ ընթացքի համար՝ ծառայել պետությանն ու ժողովրդին: Վկան՝ հանուն այդ ծառայության զոհված հարյուրավոր ոստիկանները: Վկան՝ օրենքի գերակայության հաստատման, օրինականության ապահովման, քաղաքացու իրավունքների եւ անվտանգության պահպանման անուրանալի ջանքն ու ապագային միտված հաստատուն ընթացքը:

Իսկ սեպտեմբերի 21-ը մեզ համար պարզապես տոն չէ. այն մեր հավերժության վկայագիրն է, որ Հայրենիքն ամեն օր հզորացնելու, սահմաններն անձեռնմխելի պահելու հրամայական ունի, Սեպտեմբերի 21-ի խորհուրդն ամուր պահելու պատասխանատվություն:

Աշխատանքային խորհրդակցություն

Սեպտեմբերի 18-ին ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Արման Սարգսյանն աշխատանքային խորհրդակցություն անցկացրեց ոստիկանության ղեկավար կազմի հետ:

Ողջունելով ներկաներին՝ Արման Սարգսյանը նշեց. «Ոստիկանությունում առաջիկայում սպասվում են ինստիտուցիոնալ փոփոխություններ, սակայն դա չի նշանակում, որ պետք է սպասողական մթնոլորտում ծառայենք՝ թուլացնելով աշխատանքային ռիթմը, ընդհակառակը՝ անհրաժեշտ է ձեռքբերումներն ամրապնդել, վերացնել առկա թերությունները, եւ հարկ է, որ կարճ ժամանակահատվածում հասարակությունը տեսնի նոր ոստիկանություն՝ ավելի գրագետ, ավելի արհեստավարժ, իրենց պարտականություններն ու իրավունքները հստակ գիտակցող ծառայողներով համալրված»:

Անդրադառնալով ծառայության արդյունավետության բարձրացմանը՝ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարն ընդգծեց, որ դրա հիմքում պետք է դրվի աշխատանքային ու կատարողական կարգապահության հետեւողական բարելավումը: Այս համատեքստում Արման Սարգսյանը խոսեց նաեւ կադրերի ընտրության հարցում անաչառ ու խստապահանջ մոտեցման, ինչպես եւ կոռուպցիոն երեւույթների հանդեպ որդեգրած անհանդուրժողականության մասին:

Խորհրդակցության ընթացքում քննարկվեցին օպերատիվ եւ արտաքին ծառայություններին վերաբերող այլ հարցեր եւս:

Ապօրինություններ Տալվորիկում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում օպերատիվ տվյալներ էին ստացվել Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքի ղեկավարի ապօրինությունների վերաբերյալ: Ըստ այդմ՝ համայնքի ղեկավարը, լիազորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելով, մարտի 11-ին համայնքային սեփականություն հանդիսացող 15 միլիոն 405 հազար դրամ կադաստրային արժեքով 13 հեկտար վարելահողը իբրեւ անջրդի հողատարածք անհամեմատ ցածր՝ 2 միլիոն 535 հազար դրամով վաճառել է Երեւանի մի բնակչի:

Բացի այդ, համայնքի ավագանու որոշմամբ՝ սեփականատիրոջը թույլատրվել է հիշյալ հողատարածքում կատարել խոչընդոտների մաքրման աշխատանքներ, իսկ ջրատար խողովակների ի հայտ գալու դեպքում՝ համայնքի կարիքների համար տրամադրել 200 մետր խողովակ: Սեփականատերը համայնքի ղեկավարին է տրամադրել 50 հատ 4 մետր երկարությամբ ազբոխողովակներ, որոնք չեն մուտքագրվել համայնքի հաշվեկշիռ եւ տեղափոխվել են համայնքի ղեկավարի առանձնատան բակ: Ըստ քննության հայտնի տվյալների՝ համայնքի ղեկավարը խողովակների մի մասը վաճառել է, մյուս մասը՝ խուզարկությամբ հայտնաբերվել:

Քրեական գործ է հարուցվել:

Օպերլիազորի բացահայտումը

Ոստիկանության Սպիտակի բաժնի քրեական հետախույզներից մեկը օպերատիվ տեղեկություններ էր ստացել, որ Շիրակամուտ գյուղի տներից մեկում գողեր կան: Տեղեկությունը փոխանցել էր բաժին: Օպերատիվ խումբը շտապել էր Շիրակամուտ: Այդ ընթացքում քրեական հետախույզը տեսել էր, որ բնակարանից հափշտակած իրերը տեղավորելով մեքենան՝ հեռանում են: Օպերլիազորն անձական մեքենայով հետապնդել էր:

Կասկածվողները որոշ տարածություն անցնելուց հետո հասկանալով, որ մեքենայով չեն կարող խուսափել հետապնդումից, այն գողոնով հանդերձ թողել էին ճանապարհին ու փախուստը շարունակել ոտքով:

Մեքենան տեղափոխվեց ոստիկանության Սպիտակի բաժնի պահպանվող հատուկ տարածք: Պարզվեց վարորդի եւ ուղեւորի ինքնությունը: Նրանցից մեկը հայտնաբերվեց ու ձերբակալվեց: Բացատրական աշխատանքի շնորհիվ մյուս երիտասարդը սեպտեմբերի 11-ին ներկայացավ դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

Կատարվում է նախաքննություն:

Վաճառում էին... հերթ

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության եւ Էրեբունու բաժնի ծառայողների ձեռնարկած հետախուզական միջոցառումների արդյունքում ճանապարհային ոստիկանության Երեւանի հաշվառման-քննական բաժնի տարածքում հայտնաբերվել ու, ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելու կասկածանքով, բերման է ենթարկվել յոթ անձ:

Ոստիկանների տեղեկությունների համաձայն՝ նրանք մեքենաներով նախապես հերթ են կանգնել, իսկ երբ իրենց հերթը մոտեցել է, որոշակի գումարի դիմաց այն զիջել են հերթի վերջում սպասող անձանց:

Ոստիկանության Էրեբունու բաժնի հետաքննության բաժանմունքում նյութեր են նախապատրաստվում:

Հանգամանքները քննությամբ պարզվում են:

Արագության գերազանցում

Երթեւեկության արագության գերազանցումը իրական չարիք է եւ ամեն տարի հարյուր հազարավոր մարդկանց մահվան պատճառ է դառնում: Ըստ վիճակագրության՝ աշխարհում ճանապարհատրանսպորտային պատահարների մոտ կեսը տեղի է ունենում սահմանված արագության գերազանցման պատճառով: Հայաստանում պատկերը գրեթե նույնն է:

Մեր երկրում մասնավորապես 2019 թ. ութ ամիսներին տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների մեծ մասը արագության ռեժիմի խախտման հետեւանք է:

էջ 2

Կողոպուտն իբրեւ հանցատեսակ

Կողոպտչի անշրջահայաց պահվածքը երիտասարդին է բնորոշ, եւ կողոպտիչները մեծամասամբ երիտասարդներ են:

էջ 3

Աշխարհի ամենափոքր բանտը

Բանտի հիմնական այցելուները տեղի հարբեցողներն են, սեզոնային բանվորները կամ զբոսաշրջիկները:

էջ 5

«Մարզամշակութային» ապօրինություններ

Պարտականությունները չկատարելու պայմաններում հաստատել էր հաճախումների մասին կեղծ տեղեկագրեր:

էջ 6

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը հայտարարում է «Իրավագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա վճարովի ուսուցման 2019/2020 ուսումնական տարվա ընդունելություն

Շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության մագիստրոսի աստիճան եւ տրվում պետական նմուշի դիպլոմ: Ուսման տեւողությունը 2,5 տարի է:

Ընդունելության կարգին եւ պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ ոստիկանության կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

Արագության գերազանցում

Սկիզբը՝ էջ 1

Վարորդները հիմնականում խախտում են ճանապարհային երթեւեկության կանոնների 65, 66 եւ 67-րդ կետերը:

65. Վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի սահմանված արագությունը չգերազանցող արագությամբ՝ հաշվի առնելով երթեւեկության ինտենսիվությունն ու տրանսպորտային միջոցի եւ բեռի վիճակն ու առանձնահատկությունները, ճանապարհային եւ օդերեւութաբանական պայմանները, մասնավորապես, ճանապարհային ծածկույթի վիճակն ու տեսանելիությունը երթեւեկության ուղղությամբ:

66. Վարորդը պետք է ընտրի այնպիսի արագություն, որը հնարավորություն է տալիս նրան կանոնների պահանջներին համապատասխան ապահովելու տրանսպորտային միջոցի լիարժեք կառավարումը:

67. Երթեւեկության համար խոչընդոտ կամ վտանգ առաջանալու դեպքում, որը վարորդն ի վիճակի էր հայտնաբերել, նա պետք է միջոցներ ձեռնարկի արագությունն իջեցնելու՝ ընդհուպ մինչեւ տրանսպորտային միջոցը կանգնեցնելը: Այդ դեպքում կողանցումն ու շրջանցումը թույլատրելի է, եթե վարորդը համոզված է, որ դա անվտանգ է երթեւեկության մյուս մասնակիցների համար:

Ըստ ուսումնասիրության հաշվարկների՝ վտանգը հայտնաբերելու պահից սկսած՝ տրանսպորտային միջոցը 60 կմ/ժ արագությամբ երթեւեկելու դեպքում կանցնի մոտ 50-60 մետր տարածություն՝ նոր կանգ կառնի:

Երբ ճանապարհին հայտնվում է վտանգ կամ տեղի է ունենում որեւէ անսպասելի երեւույթ, ինչը վարորդին

հարկադրում է արգելակել մեքենան, ըստ ուսումնասիրությունների՝ այդ գործողությունը չի կարող տեւել մեկ-երկու վայրկյան: Շատ վարորդներ այս ամենը հաշվի չեն առնում: Վտանգը հայտնաբերելու դեպքում վարորդին անհրաժեշտ է լինում 0,4-ից մինչեւ 1,6 վայրկյան, որպեսզի վտանգի փաստն ընկալվի: Գրականության մեջ կա «վարորդի ռեակցիա» տերմին: Այսինքն՝ 0,4-1,6 վայրկյանի ընթացքում վարորդը ի վիճակի է լինում ընկալել վտանգը, ապա ձեռնարկում է միջոցներ արգելակելու համար: Իսկ եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակահատվածում մեքենան կանցնի որոշակի տարածություն, ասենք՝ մեքենան երթեւեկում է 60 կմ/ժ արագությամբ, ապա 1 վայրկյանում նա կանցնի 16 մետր, բացի այդ, վարորդի որոշակի գործողությունների, արգելակելու ընթացքում կանցնի մոտ 20 մետր տարածություն, մինչեւ լիարժեք կանգ առնելը:

Տարբեր երկրներում արագությունը գերազանցելու համար գոյություն ունեն տարբեր չափի տուգանքներ: Օրինակ, Ֆրանսիայում 60 կմ/ժ-ից ավելի արագությունը գերազանցելու համար սահմանված է 1500 եվրո տուգանք, իսկ Կանադայում նույն կանոնը խախտելու համար տուգանվում են 10.000 դոլարի չափով: Հայաստանում սահմանված արագության գերազանցումը տուգանվում է այսպես:

Երթեւեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելու դեպքում՝ յուրաքանչյուր կմ/ժ-ը՝ 1000, 11-30 կմ/ժ-ով գերազանցելու դեպքում՝ յուրաքանչյուր կմ/ժ-ը՝ 1500 դրամ: Իսկ սահմանված արագությունը 31-50, 51-80, 81 եւ ավելի կմ/ժ-ով գերազանցելու դեպքում վարորդները համապատասխանաբար տուգանվում են 100, 200 եւ 500 հազար դրամի չափով:

Իսկ վերջում հորդոր վարորդներին՝ ճանապարհի մի կետից մյուսը մի քանի րոպե շուտ հասնելու համար չարժե վտանգել ձեր եւ ուրիշների կյանքն ու առողջությունը: Ճանապարհային ոստիկանությունը եւս մեկ անգամ զգուշացնում է՝ մի՛ գերազանցեք սահմանված արագությունը, ձեզ տանը սպասում են:

Կրակոցներ արձակած երիտասարդը հայտնաբերվեց

Սեպտեմբերի 10-ին Խոր Վիրապ վանքի մոտակայքում կրակոցներ են հնչել: Մի երիտասարդ ատրճանակից երեք անգամ օդ է կրակել: Տարածքում ծառայություն իրականացրած ոստիկանության Արարատի բաժնի պարեկայինները, արագ արձագանքելով, կանգնեցրել են երիտասարդի մեքենան ու տեղեկությունը փոխանցել բաժին:

Օպերատիվ խումբը Այնթապ գյուղում ապրող 28-ամյա տղային, ավտոմեքենայով հանդերձ, բերման ենթարկեց ոստիկանության Արարատի բաժին: Հատուկ պահպանվող տարածքում ընթերակաների ներկայությամբ «Նիսան»-ը զննվեց: Այդ ընթացքում բերման ենթարկվածը ոստիկաններին ներկայացրեց գործարանային համարով 9 մմ տրամաչափի գազային ատրճանակ՝ հայտնելով, որ իրենն է: Զննվեց նաեւ դեպքի վայրը, որտեղ հայտնաբերվեց 9 մմ տրամաչափի երեք պարկուճ:

Դեպքի առթիվ ոստիկանության Արարատի բաժնում նյութեր են նախապատրաստվում: Դեպքի հանգամանքները պարզվում են:

Կեղծ եվրո էր իրացրել

Սեպտեմբերի 12-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության, Շիրակի մարզային վարչության եւ Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի ծառայողները համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տեղեկություններ ստացան, որ Գյումրիում մի օտարերկրացի սեպտեմբերի 8-ին 500 եվրո անվանական արժեքով կեղծ թղթադրամ է իրացրել:

40-ամյա կնոջը ոստիկանները հայտնաբերեցին ու կասկածանքով բերման ենթարկեցին Կումայրիի բաժին: Ոստիկանություն հրավիրվեց Գյումրիի բնակիչ 56-ամյա տղամարդը, որին կինը կեղծ եվրոն իրացրել էր:

Դատանյութագիտական եւ դատափաստաթղթաբանական համալիր փորձաքննության եզրակացությամբ հաստատվեց քրեական հետախույզների տեղեկությունը՝ եվրոն կեղծ էր: Ոստիկանության Կումայրիի բաժնում կնոջը ձերբակալելու որոշում կայացվեց: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին 6500 եվրո, 825 դոլար եւ 184 հազար դրամ:

Քննությունը շարունակվում է:

Գողացել էր 3500 եվրո

Սեպտեմբերի լույս 15-ի գիշերը ոստիկանության Էրեբունու բաժնում հաղորդում էր ստացվել, որ «Էրեբունի» բժշկական կենտրոնի հիվանդասենյակներից մեկում անհայտ անձը հիվանդներից մեկի դրամապանակից գողացել է 3500 եվրո:

Ոստիկանության Էրեբունու բաժնի ծառայողները ձեռնարկեցին տարաբնույթ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ պարզելու գողությունը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը: Երեւանի բնակիչ, 32-ամյա տղամարդու հետ տարվեց բացատրական աշխատանք, ինչի շնորհիվ նա ներկայացավ ոստիկանության Էրեբունու բաժին, տվեց խոստովանական բացատրություն ու ներկայացրեց գողացված գումարից 1000 եվրոն:

Շարունակվում են միջոցառումները փողի մյուս մասը հայտնաբերելու ուղղությամբ: Նախապատրաստվում են նյութեր:

Չարաշահել էր պաշտոնական դիրքը

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության Արմավիրի մարզային վարչության եւ Արմավիրի բաժնի աշխատակիցների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Սարդարապատ համայնքի ղեկավարը, օգտագործելով պաշտոնական դիրքը, չարաշահումներ է թույլ տվել:

Պարզվել է, որ պաշտոնյան համայնքապետարանի գրադարանում գրադարանավարուհի է հրամանագրել իր մտերիմին, որն աշխատանքի չի ներկայացել, իսկ նրա անվամբ համայնքի բյուջեից փոխանցվել է շուրջ 2 միլիոն 170 հազար դրամ: Պարզվել է նաեւ, որ համայնքի բնակիչ չհանդիսացող անձի անվամբ համայնքի բյուջեից, որպես ուսման վարձ, փոխանցել է 140 հազար դրամ:

2017 թ. նոյեմբերի 27-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի խախտմամբ, համեմատաբար բարձր գնով՝ ութ միլիոն դրամով, համայնքապետի որդուց համայնքապետարանի համար գնվել է «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենա՝ գնման թերթիկում նշվելով բացառապես մեքենայի տեխնիկական տվյալները:

Հարուցվել է քրեական գործ:

Պաշտոնակատարի ապօրինությունները

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի նախկին պաշտոնակատարի ապօրինությունների վերաբերյալ: Ըստ քննությանն այս պահին հայտնի փվյալների՝ բուհի ռեկտորի նախկին պաշտոնակատարը, խախտելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները, հրաման է ստորագրել է, ըստ որի՝ դեկտեմբերին ու մարտին բուհում աշխատանքի ընդունված իր մտերիմներ՝ վարչատնտեսական եւ կազմակերպական դեպարտամենտի նախկին տնօրենին եւ ֆինանսական նախկին տնօրենին ամռանը տրամադրել է ամենամյա վճարովի արձակուրդ՝ վճարելով՝ ընդհանուր 640 հազար դրամից ավելի գումար՝

ուսումնական հաստատությանը պատճառելով էական վնաս: Բացի այդ, չարաշահելով պաշտոնեական լիազորությունները, նախքան 2018-2019 թթ. ուսումնական տարվա ավարտը բուհի գլխավոր էներգագետ-ճարտարագետին պարգեւատրել է 350 հազար դրամով՝ ուսումնական տարին բարեհաջող ավարտելու կապակցությամբ:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Ծղթայական նյութական վնաս

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության ծառայողները, ձեռնարկելով տարաբնույթ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, տեղեկություններ են ստացել, որ Երեւանի վարկային կազմակերպություններից մեկից խարդախությամբ հափշտակվել են առանձնապես խոշոր չափերի գումար: Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ մի խումբ անձինք տարբեր պատրվակներով այլոց մեքենաները ուրիշների անվամբ գրավադրել են վարկային կազմակերպությունում, սակայն կազմակերպությանը չեն վճարել

ստացած գումարը: Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ վարկային կազմակերպությունից խարդախությամբ հափշտակվել է 19 միլիոն 360 հազար դրամ: Փաստական տվյալներ են ձեռք բերվել նաեւ, որ գրավադրված մեքենաները կամ՛ մասնատվել ու վաճառվել են, կամ՛ դուրս են բերվել Հայաստանի տարածքից եւ վաճառվել օտար երկրում: Այսինքն, այդ անձանց հանցավոր գործողությունների հետեւանքով նյութական վնաս է պատճառվել նաեւ այն քաղաքացիներին, որոնց անունով հաշվառվել եւ գրավադրվել են մեքենաները:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Կողոպուտն իբրեւ հանցատեսակ

Ամերիկացի հոգեբանները պարզել են, որ կան հանցագործներ, որոնք օրենքը խախտելուց հաճույք են ստանում, խաղում են օրենքի հետ, եւ դա նրանց տարերքն է: Ինչո՞ւ եւ ի՞նչ ներքին մղումով է իրավախախտը նախընտրում այս կամ այն հանցատեսակը:

Սրանք հարցեր են, որոնց պատասխանները բոլոր ժամանակներում տարբեր մասնագետներ փորձել են պարզել, սակայն օրինազանցության դեմ պայքարը եղել եւ մնում է իրավապահ մարմինների հիմնական գործառույթը, դատապարտելի արարքի պատճառահետեւանքային կապն ու էությունը քննելը՝ առօրյա աշխատանք:

Անձի հանցավոր վարքը դիտարկելու եւ հասարակությանն իրազեկելու տեսանկյունից, իբրեւ հանցատեսակ, ուշագրավ է կողոպուտը: ՀՀ քրեական օրենսգրքի 176 հոդվածի համաձայն՝ այն պատկանում է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների թվին, բնութագրվում՝ ուրիշի գույքի բացահայտ հափշտակությամբ: Շատերն այս հանցատեսակը շփոթում են գողության հետ: «Տրանսպորտում ինձ կողոպտել են»,- ասում է ոստիկանություն դիմած կինն ու պատմում, թե ինչպես է անհայտ անձը, որին չի տեսել, թռցրել դրամապանակը: «Չէ, դա գողություն չէր, բացահայտ ավազակային հարձակում էր: Օրը ցերեկով ձեռքիցս խլեց պայուսակս ու փախավ»,- պատմում է մեկ ուրիշը, երբ իրականում կատարվածը ոչ թե ավազակային հարձակում, այլ կողոպուտ է:

Կողոպուտն ավազակությունից տարբերվում է նրանով, որ ավազակության պարագայում անձը ուրիշի գույքը հափշտակում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, այնինչ կողոպուտի ժամանակ թեեւ բռնություն կարող է լինել, բայց այն կյանքի կամ առողջության համար չպետք է լինի վտանգավոր: Կողոպուտի եւ գողության տարբերությունը այն կատարելու եղանակի մեջ է: Կողոպուտն, ինչպես արդեն նշել ենք, ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունն է, գողությունը՝ ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը:

Եթե գրպանահատն աշխատում է աննկատ մնալ, խարդախը թաքցնում է վստահությունը չարաշահելու իր հանցավոր մտադրությունը, երկուսն էլ գիտեն, որ գործում են դիմացինի կամքին հակառակ եւ զգուշանում են, ապա կողոպտիչը հաշվի չի առնում տուժողի կամքը, չի թաքցնում իր մտադրությունը, գործում է բացահայտ, ասես կորցնելու ոչինչ չունի:

Հափշտակության մյուս տեսակներից կողոպուտն առանձնանում է նաեւ նրանով, որ հանցագործի ողջ հաշվարկը պայմանավորված է անպասելիության գործոնով: Ուրիշի ունեցվածքին տիրանալու համար նա թե՛ տուժողին, թե՛ շրջապատին հանկարծակիի է բերում, միեւնույն ժամանակ, հոգեբանորեն պատրաստ է հնարավոր դիմադրության: Տաքարյուն, անշրջահայաց այս պահվածքն ավելի երիտասարդին է բնորոշ, եւ ուսումնասիրությունները ցույց են տալիս որ, ցավոք, կողոպտիչները մեծամասամբ երիտասարդներ են: Արտաքին ընդհանրություններ էլ կան՝ բարձրահասակ են, ամրակազմ, մարզազգեստով ու ջինսով՝ վազելու պատրաստ: Շատերն աչքի չընկնելու համար նախնտրում են գլխարկ դնել, ոմանք գործում են միայնակ, ոմանք իրենց ապահով են զգում, երբ հետն ընկեր կա:

...Կողոպտիչների աչքից չեն վրիպում օտարերկրացիները, ովքեր չգիտեն լեզուն, տարածքին անծանոթ են եւ դժվար են կողմնորոշվում: Եղել են դեպքեր, երբ տաքսու վարորդներն օտարերկրացի հյուրերին երկար ու ձիգ ճանապարհներով ման տալուց հետո խուլ մի փողոցում կողոպտել են եւ հեռացել:

Կողոպուտների թիվը սովորաբար ավելանում է ամռանը: Տաք եղանակին խոշոր առեւտրի կետերի, բանկերի ու բանկոմատների մոտ դարանակալելը հարմար է: Պատճառներից մեկն էլ այն է, որ հանցագործները թիրախ են ընտրում կանանց եւ աղջիկներին, որոնց ոսկյա վզնոցները, թեւնոցներն ու շղթաները տեսանելի են ամռան ամիսներին:

Եթե, այսպես ասած, ամառային կողոպուտների շրջանում, տուժողները հիմնականում հայտարարում են, որ հափշտակել են իրենց ոսկյա շղթան, վզնոցը, ապա այլ է պատկերը ուշ աշնանն ու ձմռանը: Տարվա այս եղանակներին հանցագործների թիրախ են դառնում կանանց պայուսակները: Իսկ թանկարժեք հեռախոս օգտագործելիս, կլիմայական պայմաններից անկախ, զգուշանալը երբեք չի խանգարի: Քիչ չեն դեպքերը, երբ տրանսպորտում հանցագործը նկատել է աղջկա ձեռքի թանկարժեք հեռախոսը, հետեւել ու աչքից հեռու մի վայրում հափշտակել է այն:

Նման հանցագործություններից քաղաքացիներին զերծ պահելու գործում ոստիկանությունը մի շարք կանխարգելիչ միջոցառումներ է իրականացնում: Ինչպես մարդաշատ վայրերում, այնպես էլ բակերում պարեկային շրջագայություններ են կազմակերպվում: Նման ծառայությունները հատկապես ուժեղացվում են գիշերային ժամերին, երբ տեսանելիությունը սահմանափակ է: Կանխարգելիչ միջոցառումների շրջանակում ոստիկանության ծառայողներն այցելում են խոշոր դրամահրային օբյեկտներ, հորդորում անվտանգության համակարգեր եւ տեսանկարահանող սարքեր տեղադրել, նաեւ միջնորդում են, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները սահմանափակ լուսավորությամբ տարածքներում համապատասխան լուսային սարքեր տեղադրեն:

Փողոցում թե բակում, տեսնելով ոստիկանության աշխատակցին ծառայություն իրականացնելիս՝ քաղաքացին իրեն ապահով է զգում: Ոստիկանն իր ներկայությամբ ոչ միայն կանխում է անկարգությունը, այլեւ նման ծառայությունների շնորհիվ հնարավորություն է ունենում հանցագործին հենց հանցանքի վայրում բռնելու:

Հատկապես մարդաշատ վայրերում, անցումներում ու փակուղիներում շրջագայելիս իրավապահներն ավելի զգոն են, աչալուրջ, ինչն էլ հանցագործներին հայտնաբերելու գործում ցանկալի արդյունք է տալիս:

Ուշադիր լինենք մեր միջավայրի հանդեպ եւ հետեւենք մեր անվտանգությանը:

Նոր Նորքի ոստիկանների բացահայտումը

Նոր Նորքի քրեական հետախույզները օրեր տեւած միջոցառումների արդյունքում ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ տեղեկություններ ստացան: Դրանք իրացրին սեպտեմբերի լույս 6-ի գիշերը:

Քրեական հետախույզները Ֆանարջյան փողոցից կասկածանքով ոստիկանության Նոր Նորքի բաժին բերման ենթարկեցին մայրաքաղաքի մի բնակչի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց յոթ փաթեթ դեղնականաչավուն մանրացված-չորացված զանգված՝ ընդհանուր 39 գրամից ավելի քաշով: Բերման ենթարկվածի հայտնածով՝ հայտնաբերվածը մարիխուանա է, որը ձեռք էր բերել վերավաճառելու նպատակով:

Նոր Նորքի ոստիկանները հայտնաբերեցին ու բերման ենթարկեցին նաեւ թմրամիջոցը վաճառած 29-ամյա երիտասարդին: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց, որ նա էլ իր հերթին թմրամիջոցը գնել էր այլ անձից: Ըստ հիմնավոր տեղեկությունների՝ այդ անձը ապրում է Արմավիրի մարզի Վարդանաշեն գյուղում: Նոր Նորքի քրեական հետախույզները 29-ամյա երիտասարդին հայտնաբերեցին հենց Վարդանաշենում: Նախքան նրան բերման ենթարկելը, իրավապահները զննեցին գյուղի շինություններից մեկը, քանի որ տեղեկություններ ունեին, որ կասկածյալն այնտեղ թմրամիջոց է թաքցրել: Հայտնաբերվեց եւ առգրավվեց կանեփանման զանգված: Երիտասարդն էլ բերման ենթարկվեց ու ձերբակալվեց:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Թռչնամսի մեջ ջուր էր ներարկել

Սեպտեմբերի 13-ին ազգային անվտանգության ծառայության եւ ոստիկանության Նուբարաշենի բաժանմունքի ծառայողները Նուբարաշենի 15-րդ փողոցից կասկածանքով բերման ենթարկեցին նույն փողոցի մի բնակչի:

44-ամյա տղամարդը, որ Նուբարաշենի թռչնաբուծական ֆաբրիկայում վարորդ-առաքիչ էր, նշված ընկերությունից առաքման համար վերցրած թռչնամսի մեջ ներարկել էր ջուր՝ փորձելով ավելացնել թռչնամսի քաշը եւ խաբել սպառողներին: Նուբարաշենի 15-րդ փողոցում կայանված «Ֆորդ» մակնիշի մեքենայում թռչնամսի մեջ ջուր ներարկելու պահին էլ իրավապահներն առաքիչին բռնեցին եւ բերման ենթարկեցին ոստիկանության Էրեբունու բաժին:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Օպերատիվ

www.police.am

Դանակարել էր կնոջն ու հարեւանին

Սեպտեմբերի 14-ին, կեսգիշերն անց, ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում ստացվեց, որ Ավանի Սայաթ-Նովա թաղամասի բնակարաններից մեկում ամուսինը դանակահարել է կնոջը:

Դեպքի վայր մեկնած ոստիկանության Ավանի բաժանմունքի եւ ՊՊԾ գնդի ծառայողները համատեղ միջոցառումներով պարզեցին, որ վիճաբանության ժամանակ 31-ամյա տղամարդը դանակահարել էր կնոջն ու 44-ամյա հարեւանին:

Տուժողները կրծքավանդակի կտրած-ծակած վերքերով տեղափոխվել են հիվանդանոց: Ըստ բժշկի տեղեկանքի նրանք ի վիճակի չեն եղել բացատրություն տալու:

31-ամյա տղամարդը բերման է ենթարկվել:

Հարուցվել է քրեական գործ:

Խուլիգանությունը բացահայտվեց

Սեպտեմբերի 13-ին ոստիկանության Շենգավիթի բաժնում խուլիգանության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ Բագրատունյաց պողոտայում «Օպել Աստրա» ավտոմեքենայի վարորդը փակել էր «ՎԱԶ-21099» ավտոմեքենայի ճանապարհը: «Օպել»-ի վարորդն ու նրան ուղեկցող անձանցից մեկը մահակով ու ոտքով հարվածել էին «ՎԱԶ-21099»-ի բնեռնախցիկին եւ դռանը, իսկ երրորդը կրակել էր մեքենայի ուղղությամբ:

Շենգավիթի քրեական հետախույզների, համայնքային ոստիկանների եւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի 5-րդ վաշտի ծառայողների համատեղ ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվեց խուլիգանությունը կատարողների ինքնությունը:

Բացատրական աշխատանքների շնորհիվ նրանք ներկայացան ոստիկանության Շենգավիթի բաժին՝ ներկայացնելով նաեւ «Մակարով» օդաճնշիչ ատրճանակը:

Կատարվում է քննություն:

Խարդախություն ծաղկի սրահում

Օգոստոսի 31-ին ոստիկանության Վաղարշապատի բաժին ահազանգել էր էջմիածին քաղաքի մի բնակչուհի եւ հայտնել, որ ծաղկի սրահում իրեն կեղծ 5 հազար ռուբլի են տվել:

Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ էջմիածնի Արագածի զանգվածի ծաղկի սրահում անհայտ անձը 6 հազար դրամով ծաղկեփունջ էր գնել, վճարել 5 հազար ռուբլի հուշանվեր թղթադրամ եւ ստացել 29 հազար դրամ մանր, ինչի արդյունքում խանութի աշխատակցուհուն պատճառել էր 35 հազար դրամի գույքային վնաս:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր եւ Արմավիրի մարզային վարչությունների ու Վաղարշապատի բաժնի ծառայողները պարզեցին, որ խարդախություն կատարած անձը Կապան քաղաքի 57-ամյա բնակիչ է: Նա սեպտեմբերի 11-ին Երեւան քաղաքի Բաշինջաղյան փողոցից, խարդախություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ու ներկայացվեց Վաղարշապատի քննչական բաժին, որտեղ տվեց խոստովանական ցուցմունք:

Նախաքննությունը շարունակվում է:

Գողություններ մեքենաներից

Սեպտեմբերի 11-ին ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տեղեկություններ ստացան, որ Բյուրեղավանի բնակիչ, 26-ամյա մի երիտասարդ Աջափնյակ վարչական շրջանում գողություն է արել:

Երիտասարդը հայտնաբերվեց Հալաբյան փողոցում ու կասկածանքով բերման ենթարկվեց բաժին: Պարզվեց, որ նա սեպտեմբերի 1-ին տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էր Սիլիկյան թաղամասում կայանված «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի շարժիչի կափարիչն ու գողացել մարտկոցը: Տուժողը ոստիկանություն չէր դիմել:

Բերման ենթարկվածի հայտնածով՝ Աջափնյակում մեքենաներից էլի էր գողություններ արել:

Դեպքերի հանգամանքները պարզվում են:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Վեճ արոտավայրում

Գեղարքունիքի մարզի Նորաբակ գյուղի բնակիչներ Արմեն Գալստյանը եւ Անդրանիկ Հարությունյանը հովվություն էին անում: Հերթով արոտի էին տանում համագյուղացիների մանր եղջերավորները:

Մի աշխատանքային օր Արմենը հանդում նկատեց հոշոտված ոչխարի մնացորդներ: Բրդի վրայի կարմիր նշանից հասկացավ, որ գործընկերոջ՝ Անդրանիկի ոչխարն է: Հավանաբար հոտից հետ էր մնացել, ու գայլերը գիշերը հոշոտել էին:

Անդրանիկը ոչխարի կորուստը չէր նկատել: Երբ Արմենը կատարվածի մասին տեղեկացրեց նրան՝ զայրացավ: Գուցե ոչխարը օրը ցերեկո՞վ էր գայլերի բաժին դարձել Արմենի անուշադրության պատճառով: Նա էլ հակառակը պնդեց՝ թե ցերեկով լիներ, ապա հոտը այս ու այն կողմ կփախչեր, գայլերը կհոշոտեին: Մի խոսքով, Անդրանիկը պահանջեց, որ Արմենը փոխհատուցի վնասը, ինչից Արմենը զայրացավ:

Համագյուղացիները վիճեցին. Արմենը խփեց Անդրանիկին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Վարդենիսի բաժնի աշխատակիցները:

Քրեական օրենսգրքի 118 հոդվածի հատկանիշներով կատարվում է քննություն:

Պահանջատեր գործատուն

Տավուշի մարզի Աղավնավանք գյուղի բնակիչ Անդրանիկ Միրզոյանը զբաղվում էր գյուղատնտեսական աշխատանքներով, միեւնույն ժամանակ, աշխատանքի փնտրտուքի մեջ էր: Եթե աշխատեր, կկարողանար հարթել կենցաղային խնդիրները: Ի վերջո, աշխատանք գտավ Հաղարծին գյուղի բնակիչ Արմեն Սողոմոնյանի անասնաֆերմայում:

Գործատուն Անդրանիկի աշխատանքից գոհ էր, սակայն ամիսներ անց Անդրանիկը որոշեց մեկ այլ աշխատանք գտնել, քանզի առավոտից մինչեւ ուշ գիշեր անասնաֆերմայում էր եւ իր գործերով զբաղվելու ժամանակ չէր ունենում: Որոշման մասին տեղեկացրեց գործատուին: Արմենը փորձեց համոզել, որ շարունակի աշխատել, սակայն Անդրանիկը վճռական էր:

Վիճեցին: Արմենը ձեռքերով ու ոտքերով խփեց Անդրանիկին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Դիլիջանի բաժնի աշխատակիցները:

Արմեն Սողոմոնյանը խախտել էր քրեական օրենսգրքի 118 հոդվածի պահանջները: Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սկիզբը՝ նախորդ համարում

Ալկոհոլը՝ թմրամիջոց

Մասնագետները կարծում են, որ ալկոհոլի օգտագործման հիմնական պատճառը այսպես ասած՝ «ինքնաբուժման գործընթացի» կազմակերպումն է. դրա միջոցով փորձ է արվում թեթեւացնել լարվածությունը:

Ալկոհոլային կախվածությունն ինքնին ենթադրում է մարդու մոտ որոշակի թերությունների եւ արատների առկայություն:

Գիտնականները կատարել են բազմաթիվ հետազոտություններ՝ փորձելով հայտնաբերել բնավորության այն գծերը, որոնք մարդուն կապում են ալկոհոլի հետ: Բայց ասել, թե գիտնականները գրանցել են այնպիսի արդյունքներ, որոնց հիման վրա կարելի է փրկել մարդկանց այդ կախվածությունից՝ սխալ է:

Ալկոհոլը չարաշահում են ինչպես բարձրագույն կրթությամբ անձինք, այնպես էլ անգրագետ, տաղանդավոր եւ սահմանափակ, հոգեպես առողջ եւ հոգեկան հիվանդություն ունեցողները, պաշտոնավոր եւ անպաշտոն մարդիկ, անգամ՝ հանրահայտ դերասաններ ու մարզիկներ, որոնք հարվածի տակ են դնում իրենց կյանքն ու կարիերան:

Ալկոհոլի չարաշահումն անդրադառնում է ոչ միայն մարդու արտաքինի, այլեւ բնավորության վրա: Ալկոհոլամոլները կամաց-կամաց սկսում են նմանվել իրար: Խմող մարդկանց բնորոշ են որոշակի հոգեբանական առանձնահատկություններ, որոնք դժվարացնում են հարբեցողությամբ տառապողների բուժումը:

Ալկոհոլային կախվածություն ունեցող մարդիկ սովորաբար չեն ընդունում իրենց հիվանդության փաստը:

Հիվանդությունը լիովին ժխտվում է. սա կարելի է ասել ամենաբարդ դեպքն է, քանի որ հիվանդը հերքում է եւ չի ընդունում իր հիվանդ լինելու փաստը: Նա վստահ է, որ խմիչքը ոչ մի կերպ չի ազդում իր մտքի եւ գործի վրա: Չի ընդունում, որ հարբեցող է, չնայած շրջապատն ու ընտանիքը համոզված են դրանում: Հիվանդը բուժվելու համար նախ պետք է ազատվի իր հիվանդությունը ժխտելուց: Նրան պետք է այնպես տրամադրել, որ անկեղծ լինի ինքն իր

հանդեպ: Հոգեբանի աշխատանքն այստեղ շատ կարեւոր է:

Հիվանդությունը թերագնահատվում է. այս դեպքում մարդը որոշ չափով է համաձայն, որ խնդիրներ ունի: Բայց այնքան էլ վատ չէ վիճակը՝ ըստ ալկոհոլով տառապողի: Հաճախ հարբեցողը փորձում է ավելի թեթեւ խմիչք օգտագործել՝ այդպիսով ջանալով վերահսկել օգտագործվող չափաբաժինները: Այս տարբերակով հարբեցողը ցույց է տալիս, որ ցանկացած պահի կարող է թողնել խմելը:

Հիվանդությունը գերագնահատվում է. այս դեպքում հիվանդը ոչ միայն գիտակցում է, այլեւ գերագնահատում է իր վիճակը եւ ամենուր ասում, որ այլեւս հնարավոր չէ իրեն բուժել: Նա գիտակցում է, որ հիվանդ է, բայց օգնություն ցուցաբերելը բավական դժվար խնդիր է դառնում:

Թվարկված երեք դեպքերում հարբեցող անձին սթափեցնել ցանկացող հարազատների հետ անխուսափելի են կոնֆլիկտները: Նման պարագայում հարկավոր է մասնագետների միջամտությունը: Քանի որ հարբեցողությունը ոչ թե նեղ ընտանեկան խնդիր է, այլ խնդիր՝ հասարակության համար: Իսկ եթե հարբեցողությունը զարգանալու միտումներ է ունենում, ապա դա, կարելի է ասել, ազգային ողբերգություն է: Այն իր հետ բերում է դժբախտություններ՝ գենոֆոնդի աղավաղում, ամուսնալուծություններ, հանցագործությունների աճ:

Քիչ չեն դեպքերը, երբ հանցագործությունները կատարվում են հարբած անձանց կողմից: Այդպիսի հանցագործությունները տարաբնույթ են. փողոցային խուլիգանությունից՝ մինչեւ ամենածանր հանցանքներ:

Հարբեցողությունը փոխում է մարդուն, դեպի վատը: Նրա մեջ արթնանում են ոչ լավ որակներ, փոխվում է անձի սոցիալ-հոգեբանական նկարագիրը: Բոլոր այս փոփոխությունները մարդուն մղում են հանցագործության: Հաճախ է պատահում, երբ հարբած հանցագործը հաջորդ օրն ուշքի է գալիս եւ չի կարողանում բացատրել, թե ինչու է կատարել տվյալ արարքը: Նման դեպքերում ընդամենը մեկ պատասխան ունեն՝ խմած էի, չեմ հասկացել, չեմ գիտակցել...

Հարբեցողությամբ տառապող մարդիկ գիտակցում են, որ պետք է բուժվեն, բայց ճիշտ հակառակն են անում: Նրանք ի վիճակի չեն հասկանալ սեփական անձը, հետեւաբար՝ կառավարել իրենց վարքագիծը:

Այսօր կան հարբեցողության բուժման զանազան դեղորայքային տարբերակներ: Պետք է նշել, որ այս մոլուցքի հաղթահարման համար առաջարկված հոգեթերապեւտիկ մոտեցումն աստիճանաբար առաջատար է դառնում գոյություն ունեցող մյուս բոլոր մեթոդների շարքում: Մարդը ոչ միայն ֆիզիկական մարմին է, այլեւ ունի չբացահայտված ռեսուրսներ: Հենց դրանից էլ պետք է սկսել բուժման գործընթացը:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Ոստիկանի ամփոփագիր

Շապկովակը՝ Երեւանում

Ոստիկանություն զանգած կինը հայտնել է, որ իրենց շենքի մոտ մի կին գողացել է մուտքում նորոգման աշխատանքներ կատարող բանվորի պայուսակը, որի մեջ եղել է բջջային հեռախոս, փաստաթղթեր: Ահազանգողը նաեւ հայտնել է, որ կինը մտել է շենք ու բարձրացել վերին հարկեր:

Քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը կատարել է ազգականին հյուր եկած 82-ամյա մի կին: Նա ներկայացվել է բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

Գողոնը վերցված է:

Ձմերուկը կերա՞վ

Օրեր առաջ 92-ամյա մի տղամարդուց ոստիկանություն ահազանգ է ստացվել, որ անհայտ անձը ձմերուկ ուտելու պատրվակով մտել է իր բնակարան եւ հյուրասենյակի գրապահարանի գրքի միջից գողացել 190 հազար դրամ:

Ձմերուկը բկին մնա...

Ո՞վ կհաղթի քաջ հերոսին

82-ամյա մի տղամարդ հաղորդում է տվել, որ մոտ տասն օր առաջ կինը իրենց տան միջանցքում շարված վառելափայտի միջից գողացել է իր պահած եւ միայն իրեն պատկանող 400 հազար դրամը:

Ձեռնարկվում են միջոցներ կնոջը հայտնաբերելու ուղղությամբ:

ԹայսոնՅանը

Օգոստոսի 9-ին մայրաքաղաքի մի հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ ականջախեցու՝ մարդու կծած վերքով բուժօգնության է դիմել 29-ամյա մի երիտասարդ: Մեկնած ոստիկանները պարզել են, որ նա վնասվածքը ստացել է հայրենի քաղաքում՝ անհայտ անձի հետ վիճաբանության ժամանակ:

Ձեռնարկվում են միջոցառումներ հայ «Թայսոնին» հայտնաբերելու ուղղությամբ:

Վարպետներն ու գայթակղությունը

57-ամյա մի տղամարդ հաղորդում է տվել, որ իրենց գյուղի շինության տանիքը նորոգող վարպետները՝ ոմն Ժիրո, Մայիս, Արսեն եւ Խաչիկ, գողացել են 100 գ ընդհանուր կշռով ոսկյա զարդեր: Պարզվել է, որ տանտերը բաց արկղով զարդերը դրել է դեռեւս բաց կտուրում ու վարպետներին թողել մենակ՝ գայթակղության հետ:

Ձեռնարկվում են միջոցառումներ վարպետների ինքնությունը պարզելու եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ սեպտեմբերի 12-ից 19-ը ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 26 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը՝ սպանության փորձի եւ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու եւ դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 1-ը՝ ծեծի եւ ինքնիրավչության, 1-ը՝ ծեծի եւ անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելու, 1-ը՝ մարդուն առեւանգելու, 5-ը՝ գողության, 1-ը՝ խարդախության, 1-ը՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու եւ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու եւ զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելուն կամ շորթելուն հանցակցելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 4 հետախուզվող:

Արձանագրվել է 112 ճանապարհատրանսպորտային պատահար. 9 մարդ զոհվել է, 167-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 32 դեպք. 4 մարդ զոհվել է, 29-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Սեպտեմբերի 15-ին Երեւանի Բագրատունյաց պողոտայի եւ Եղ. Թադեւոսյան փողոցի խաչմերուկում իրար են բախվել «Օպել» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ի 55-ամյա վարորդը եւ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 15-ին Երեւանի Ծիծեռնակաբերդի խճուղում իրար են բախվել «Ինֆինիտի», «Օպել», «ԲՄՎ» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «ԲՄՎ»-ի 21-ամյա վարորդը, «Ինֆինիտի»-ի երեք ուղեւորները, «Մերսեդես»-ի 41-ամյա վարորդը եւ 38-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 15-ին Երեւանի Երեւանյան խճուղում «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 22-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 15-ին Երեւանի Սեբաստիայի եւ Տիչինայի փողոցների խաչմերուկում «Պեժո» մակնիշի ավտոմեքենայի վարորդը անհայտ քաղաքացու է վրաերթի ենթարկել:

■

Սեպտեմբերի 16-ին Երեւանի Սեբաստիայի փողոցում «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 79-ամյա մի կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ գիտակցության չգալով՝ մահացել է:

■

Սեպտեմբերի 16-ին Երեւան-Մեղրի ճանապարհի 58-րդ կմ-ին «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել հանդիպակաց գոտի եւ բախվել «ԿամԱԶ-53213» մակնիշի ավտոմեքենայի: «ԲՄՎ»-ում հրդեհ է բռնկվել, եւ հայտնաբերվել են վարորդի եւ երկու ուղեւորների մոխրացած դիակները, իսկ «ԿամԱԶ»-ի 57-ամյա վարորդը եւ 24-ամյա ուղեւորը տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 16-ին Երեւանի Ագաթանգեղոսի եւ Խանջյան փողոցների խաչմերուկում անհայտ ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 9-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 16-ին Աշտարակ քաղաքի Նարեկացու փողոցում «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենան բախվել է խանութի պատին եւ կողաշրջվել. 23-ամյա վարորդը եւ 22-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 16-ին Արմավիրի մարզի Այգեկ գյուղում «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 12-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 16-ին Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 13-րդ կմ-ին իրար են բախվել «ԿԻԱ», «Մերսեդես» եւ «ՎԱԶ-21099» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-21099»-ի 37-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 17-ին Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 33-րդ կմ-ին «ԲՄՎ X 5» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել. 37-ամյա վարորդը տեղում մահացել է:

■

Սեպտեմբերի 17-ին Արարատի մարզի Դաշտավան-Դարակերտ ճանապարհի 3-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել կայանված «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի: «Նիսան»-ը տեղաշարժվելով՝ հարվածել է կայանված «Միցուբիշի Լանսեր» մակնիշի ավտոմեքենայի ու մեքենայի մոտ կանգնած 40-ամյա քաղաքացու. վրաերթի ենթարկված քաղաքացին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Քադաֆիի կայսրության անկման իրական պատճառները

2010 թվականի սեպտեմբերը համարվում է Մեծ արհեստական գետի հիմնադրման ամիս: 2008 թվականին գետը գրանցվեց Գինեսի ռեկորդների գրքում. նրա հետ է կապվում աշխարհում ոռոգման ամենամեծ ծրագիրը: Բայց, չգիտես ինչու, ՁԼՄ-ները այդ մասին համառորեն լռում են: Դետաքրքիրը այս դեպքում ոչ թե ոռոգման ծրագրի մասշտաբն է, այլ յուրահատուկ նախագծի նպատակը: Նախագծի հաջող ավարտի արդյունքում՝ արհեստական գետի շնորհիվ անապատային Աֆրիկան կդառնա կանաչ մայրցամաք, ինչպիսիք են Ամերիկան եւ Ավստրալիան:

Բայց արդյո՞ք այն բարեհաջող ավարտ կունենա...



Նավթի փոխարեն ջո՞ւր

Երբ 1953 թվականին Լիբիան փնտրում էր նավթահանքեր, հարավում անսպասելի խմելու ջրի հսկայական պաշարներ հայտնաբերվեցին: Տասնյակ տարիներ անց լիբիացիները հասկացան, թե ինչ թանկարժեք գանձ են գտել՝ ջուր, որ թանկ է սեւ ոսկուց:

Սեւ մայրցամաքը մշտապես ունենալով ջրի պակաս, ինչի հետեւանքով՝ աղքատիկ բնություն, պարզվում է՝ ունի ջրի հսկայական պաշար՝ 35 հազար խմ արտեզյան ջուր, այսինքն՝ այնքան, որ կարելի է ողողել Գերմանիայի տարածքը: Եթե այս ջրով ոռոգվի Աֆրիկա մայրցամաքը, ապա այն կվերածվի կանաչ տարածքի եւ ծաղկող այգիների:

Հենց այս մասին էր մտածում Լիբիայի առաջնորդ Մուամար Քադաֆին: Ինչպե՞ս չմտածեր, երբ իր երկրի տարածքը գրեթե անապատային է: Քադաֆին նպատակ ուներ ստեղծել բարդ համակարգով ջրատար խողովակաշար, որը նուբիական ջրամբարից ջուր կմատակարարեր երկրի ամենաչորային տարածքները: Այդ նախագծի համար Հարավային Կորեայից հատուկ մասնագետներ հրավիրվեցին, էլ Բուրայթ քաղաքում նույնիսկ գործարան կառուցվեց, որը սկսեց արտադրել ցեմենտաբետոնե, չորս մետր տրամագծով հատուկ խողովակներ: 1984 թվականին Քադաֆին անձամբ բացեց գործարանը:

Քադաֆիի ութերորդ հրաշալիքը

Զուր չէ, որ արհեստական այս գետը գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում: Շատերն այն անվանում են ամենամեծ ինժեներական կառույցն աշխարհում: Իսկ Քադաֆին այն անվանում էր ութերորդ հրաշալիք: Այսօր այդ խողովակաշարն ունի 1300 հոր, որոնցից յուրաքանչյուրն ունի կես կիլոմետր խորություն, մոտ չորս հազար կիլոմետր ստորգետնյա բետոնե խողովակներ, ջրամղիչ պոմպակայան, ջրամբար, կառավարման կենտրոնական համակարգ: Այդ չորսմետրանոց խողովակներով օրական յոթ միլիոն խորանարդ ջուր է մատակարարվում մի քանի քաղաքների, այդ թվում՝ Լիբիայի մայրաքաղաքին, Բենգազի եւ Գարյան, Սիրտ եւ այլ քաղաքներին, ոռոգվում են հենց անապատի կենտրոնի դաշտերը:

Լիբիայի առաջնորդը ծրագրում էր մեծացնել ոռոգվող տարածքները, իսկ հետագայում Լիբիային պետք է միանային աֆրիկյան մի քանի երկրներ: Գլխավոր նպատակն այն էր, որ լիբիացիները ցանկանում էին իրենց հավերժ սոված եւ աղքատ մայրցամաքը վերածել ծաղկուն տարածքի, որը կկարողանար ոչ միայն իրեն ապահովել ցորենի, գարու, վարսակի, եգիպտացորենի պաշարներով, այլեւ զբաղվել դրանց արտահանմամբ: Նախագծի ավարտը նախանշվում էր քառորդ դար անց: Բայց...

Արտաքսում դրախտից

Լիբիան բռնեց հեղափոխության ուղին: Երկրում ապստամբություն պայթեց: 2011 թվականի աշնանը Քադաֆին սպանվեց ապստամբների ձեռքով: Իրականում Քադաֆիին սպանեց հենց այս նախագիծը, նրա մահվան պատճառը այս կյանք պարգեւող խողովակաշարն էր, ութերորդ հրաշալիքը: Իհարկե, որոշ հսկա պետությունների, որոնք զբաղվում են սեւ մայրցամաք ապրանքների արտահանմամբ, բնավ ձեռնտու չէր, որ Աֆրիկան դառնա ինքնուրույն, սպառող երկրից վերածվի արտադրող, արտահանող երկրի: Եվ հիմա, երբ մոլորակի բնակչությունը աճել է, եւ ավելի շատ թարմ ջրի պահանջ կա, ինչը ներկա պահին թանկարժեք ռեսուրս է, ինչ- որ Լիբիա պետությունում կա խմելու ջրի մեծ պաշար, որը կարող է մի քանի դար ապահովել Եվրոպայի երկրներին: Եվ՝ ոչ միայն:

Մի անգամ շինհրապարակում Քադաֆիի հնչեցրած մտքերը հետագայում դարձան իրականություն. «Հիմա, երբ նման հնարավորություններ ունենք, ԱՄՆ-ը մեր դեմ կկրկնապատկի սպառնալիքները: Նրանք ամեն ինչ կանեն, որ մեր մեծ աշխատանքը կործանվի եւ լիբիացի ժողովրդին ընդմիշտ թողնեն ճնշված վիճակում»:

Այդ ելույթին ներկա էին աֆրիկյան մի քանի պետությունների ղեկավարներ, որոնք աջակցում էին Քադաֆիին այդ գործում: Նրանց թվում էր Եգիպտոսի նախկին նախագահ Հոսնի Մուբարաքը, որը պետության ղեկավարի պաշտոնը թողեց երկրում բռնկված հեղափոխության պատճառով:

Սրանք պատահականությունն՞ր են, թե՞... Շատ չե՞ն, արդյոք, այս պատահականությունները: Հետաքրքիրն այն է, որ երբ լիբիական կոնֆլիկտին միջամտեցին ՆԱՏՕ-ի զորքերը, առաջինը սկսեցին ռմբակոծել Մեծ արհեստական գետը, բետոն արտադրող գործարանը, պոմպակայանները եւ համակարգի կառավարման կենտրոնները:

Այնպես որ, նավթի համար պայքարը սահուն վերածվում էր ջրի համար պայքարի: Եվ Քադաֆին առաջին զոհն էր: Հուսով ենք՝ վերջինը...

Աշխարհի ամենափոքր բանտը

Նորմանդիայի ծովափից ոչ հեռու, Լա Մանշ նեղուցում գտնվում է Սարկ կղզին: Նրա երկարությունը 5 կմ է, իսկ լայնությունը՝ 1,5 կմ: Սարկում բնակվում է շուրջ 600 հոգի: Այնտեղ արգելված են ավտոմեքենաները, ճանապարհներին կարելի է հանդիպել միայն հեծանվորդների, ձիակառքերի եւ գյուղատնտեսական տեխնիկայի: Շարժիչով հեծանիվ վարել թույլատրվում է միայն տարեցներին: Կա մեկ դպրոց, երկուական եկեղեցի եւ գարեջրատներ: Կղզում վերացված է գույքահարկը: Գործում է 28 հոգուց բաղկացած խորհրդարան:

1856 թ. Սարկում կառուցվեց բանտ, որը գրեթե դատարկ էր: Բանտն ունի 2 խուց՝ 1,80X1,80-ի եւ 1,80X2,40 մետր մակերեսներով: Բանտախցերը պատուհաններ չունեն: Կղզում հազվադեպ են գրանցվում հանցագործություններ:

Առավել «ծանր» հանցագործություն կատարել էր բնակիչներից մեկի տանը ծառայող աղջիկը, որը գողացել էր տանտիրուհու թաշկինակը, որի համար դատապարտվել էր երեքօրյա բանտարկության: Աղջիկը այնքան էր վախեցել մթությունից, որ նրան թույլատրել էին աթոռ դնել բաց դռան մոտ եւ աղջկան հսկում էին տեղի տիկինները, որոնք միաժամանակ զրուցում էին բանտարկյալի հետ:

Վերջին «լուրջ» հանցագործությունը գրանցվել է 1900 թ., երբ անգործ ֆիզիկոս ոմն Անդրե Գարդեսը իրեն հայտարարել էր Սարկի լորդ եւ փորձել էր զավթել իշխանությունը եւ դրա համար ձերբակալվել էր բնակիչների կողմից:

Ներկայումս բանտի հիմնական այցելուները տեղի հարբեցողներն են, սեզոնային բանվորները կամ զբոսաշրջիկները: Սովորաբար բանտարկության ժամկետը մի քանի ժամից մինչեւ մի քանի օր է: Կղզում կա երկու ոստիկան, որոնք իրավապահի պարտականությունները կատարում են կամավոր: Զբոսաշրջիկներին թույլատրվում է գիշերել բանտի ազատ խցերում:

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

«Մարզամշակութային» ապօրինություններ

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողների օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ բացահայտվել է մի մարզամշակութային կենտրոն ՅՈԱԿ-ի տնօրենի ապօրինությունները:

Ըստ նախնական տվյալների, կենտրոնի տնօրենն օժտված լինելով կարգադրիչ լիազորություններով եւ հանդիսանալով պաշտոնատար անձ՝ հափշտակություն կատարելու դիտավորությամբ օգտագործել էր իր պաշտոնեական դիրքը եւ 2016-ից 2019 թվականներին իր կնոջը հրամանագրել էր տնտեսվարի, պարուսույցի, հետո նաեւ գեղարվեստական մարզիչի հաստիքներում, սակայն կինը աշխատանքի չէր ներկայացել: Աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում կենտրոնի տնօրենը հաստատել էր կնոջ հաճախումների մասին կեղծ տեղեկություններով լրացված աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, որոնց հիման վրա էլ յուրացման եղանակով հափշտակվել է կնոջ անվամբ որպես աշխատավարձ դուրս գրված ընդհանուր 2 միլիոն 339 հազար դրամ:

Բացի այդ, մարզամշակութային կենտրոնի տնօրենը, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, անվճար ծառայություններ մատուցելու փոխարեն կենտրոնի մի շարք մարզիչների միջոցով սաներից եւ նրանց ծնողներից, որպես ամսական վարձավճարներ, ապօրինի գանձելով 5000-10.000-ական դրամ՝ 2012-2019 թթ. կազմակերպել եւ իրականացրել էր, նյութերով այս պահին պարզված, ընդհանուր՝ 5 միլիոն 89 հազար դրամի ապօրինի դրամահավաք:

Քննության այս պահին հայտնի տվյալներով՝ կենտրոնի տնօրենը կենտրոնի պահակների միջոցով կազմակերպությանը պատկանող ավտոկայանատեղիում կազմակերպել էր կանոնադրությամբ չնախատեսված ձեռնարկատիրական գործունեություն: Հարակից շենքերի բնակիչների մեքենաները նշված տարածքում կայանելու դիմաց նրանցից 300-ական դրամ գանձելով՝ 2017-2019 թթ. կազմակերպել եւ իրականացրել էր, նյութերով այս պահին պարզված, 4 միլիոն 626 հազար դրամի ապօրինի դրամահավաք:

Հարուցվել է քրեական գործ:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Վիճաբանությունից՝ դանակահարություն

Սեպտեմբերի 4-ին ոստիկանության Բագումի բաժնում հիվանդանոցից ահազանգ ստացվեց, որ բազմաթիվ կտրած վերքերով եւ քերծվածքներով բուժօգնության է դիմել 42-ամյա մի տղամարդ:

Հիվանդանոց մեկնեց օպերատիվ խումբ: Ձեռնարկված միջոցառումներով պարզվեց, որ տուժածը վնասվածքները ստացել է իր բնակարանում: Ալկոհոլի ազդեցության տակ, կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում, Վանաձորի 3-րդ մաս թաղամասի բնակիչը գլխով եւ դանակով հարվածներ էր հասցրել տղամարդուն:

Դեպքի հաջորդ օրը Վանաձորի ոստիկանները պարզեցին դանակահարողի ինքնությունը: 48-ամյա տղամարդը բերման ենթարկվեց ոստիկանության Բագումի բաժին եւ խոստովանական բացատրություն տվեց:

Քննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Հայտնաբերվածը թմրամիջոց էր

Սեպտեմբերի 9-ին ոստիկանության Շենգավիթի բաժնի Չարբախի բաժանմունքի քրեական հետախույզները ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ օպերատիվ տվյալներ էին ստացել: Տեղեկություններն իրացրին Երեւան քաղաքի վարչության ու Շենգավիթի բաժնի գործընկերների հետ՝ հայտնաբերելով ու բերման ենթարկելով Արարատի մարզի 37 եւ 25-ամյա բնակիչների: Չարբախի բաժանմունք տեղափոխվեց նաեւ տղամարդու «Օպել»-ը:

Բերման ենթարկվածների անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին տարբեր քաշով կանեփ պարունակող զանգվածներ: 37-ամյա տղամարդը մեքենայի սրահից ներկայացրեց 5 գրամից ավելի քաշով մեթամֆետամին թմրամիջոցի նմանվող բյուրեղանման զանգված, ինչը, նրա հայտնածով, կրիստալ թմրամիջոց է:

Նշանակվել են փորձաքննություններ: Միջոցառումներ են ձեռնարկվում թմրամիջոցների ձեռքբերման աղբյուրը պարզելու ուղղությամբ:

Կատարվում է քննություն:

Դանակահարությունը բացահայտվեց

Օրերս «Վաղարշապատ» բժշկական կենտրոնից ոստիկանության Վաղարշապատի բաժնում հաղորդում ստացվեց, որ որովայնի թափանցող վնասվածքով անչափահաս տղա է տեղափոխվել հիվանդանոց:

Դեպքի առթիվ քրեական գործ հարուցվեց, որի շրջանակներում ոստիկանության Վաղարշապատի բաժնի քրեական հետախույզները բազմաբնույթ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկեցին: Պարզեցին, որ դեպքը կատարվել Էջմիածնի զբոսայգիներից մեկում: Մի խումբ երիտասարդների վեճը հանգուցալուծվել էր դանակահարությամբ:

Շուտով պարզվեց նաեւ հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը: 16-ամյա երիտասարդը բաժին բերվելուց հետո ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող մարմնին եւ ձերբակալվեց, իսկ սեպտեմբերի 9-ին կալանավորվեց:

Հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողությունները շարունակվում են:

Հիմա էլ՝ ավտոլվացման կետից

Օգոստոսի 30-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում գողության վերաբերյալ հաղորդում էր ստացվել: Ավտոլվացման կետի դրամապահոցներից գաղտնի հափշտակել էին 160 հազար դրամ: Բաժնի քրեական հետախույզների եւ անչափահասների գործերով ծառայողների համատեղ միջոցառումների շնորհիվ հանցագործությունը բացահայտվեց:

Գողությունը կատարել էին Երեւանի 16, 17 եւ 18-ամյա բնակիչներ: Նրանք հայտնաբերվեցին ու ներկայացվեցին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին: Հետագա միջոցառումներով իրավապահները պարզեցին նաեւ, որ եռյակը նմանատիպ գողություններ էր արել նաեւ Քանաքեռ-Զեյթուն եւ Արաբկիր վարչական շրջաններում: Միջոցառումները շարունակվում են դեպքերի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Հուլիսից՝ հուլիս

Հուլիսի 20-ին ոստիկանության Մասիսի բաժնում մի տղամարդուց ահազանգ էր ստացվել, որ Այնթապ գյուղում կայանված իր մեքենայի սրահից գողացել են դրամապանակն ու բջջային հեռախոսը:

Դեպքի առթիվ քրեական գործ հարուցվեց, սկսվեցին օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումներ: Մասիսի ոստիկանների տեսադաշտում հայտնվեց գողությունը կատարելու մեջ կասկածվողը: Երեւանի բնակիչ, 28-ամյա երիտասարդը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց: Նա ներկայացվեց տարածքային քննչական բաժին ու տվեց խոստովանական ցուցմունք: Հետագա միջոցառումներով իրավապահները պարզեցին, որ բերման ենթարկվածը նախորդ տարվա հուլիսին էլ մի տղամարդու մեքենայի սրահից գողացել է պայուսակ, որի մեջ եղել է բջջային հեռախոս:

Դեպքերի հանգամանքները պարզվում են:

Կատարվում է նախաքննություն:

www.police.am

Բնակարանային գողության փորձ

Սեպտեմբերի 13-ին ոստիկանության Էրեբունու բաժնում բնակարանային գողության վերաբերյալ հաղորդում էր ստացվել: Մեկնած օպերատիվ խմբի ծառայողները պարզել են, որ ժամը 09.00-ից 19.00-ն ընկած ժամանակահատվածում տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել են Արցախի փողոցի շենքերից մեկի առաջին հարկի բնակարանի պատուհանը, փորձել գողություն անել, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չեն հասցրել:

Էրեբունու քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողության փորձն արել է 16-ամյա մի պատանի: Նա բերման է ենթարկվել ոստիկանություն եւ տվել խոստովանական բացատրություն:

Կատարվում է քննություն:

Հրդեհ՝ անզգուշությամբ

Օրերս Մեղրու հրշեջ-փրկարարական ծառայությունից ոստիկանության Մեղրիի բաժին ահազանգ էր ստացվել, որ Լեհվազ գյուղից Վահրավար տանող ճանապարհի անտառային հատվածում հրդեհ է բռնկվել: Հրդեհաշիջման աշխատանքները, որին մասնակցել են նաեւ Մեղրիի ոստիկանները, մեկ օր տեւեցին: Բացի անտառային յոթ հեկտար հրդեհված տարածքից, հրդեհվել էին նաեւ համայնքի երկու բնակչի հողամասերը: Նախնական հաշվարկով՝ սեփականատերերին պատճառվել էր 700 հազար դրամի վնաս, իսկ համայնքին՝ առանձնապես խոշոր չափերի:

Մեղրիի ոստիկանները պարզեցին, որ հրդեհը բռնկվել է Լեհվազ գյուղի 21 եւ 9-ամյա երկու բնակչի՝ խորովածի համար անզգույշ կրակ վառելու հետեւանքով: Բացատրական աշխատանքի շնորհիվ նրանք ներկայացան ոստիկանության Մեղրիի բաժին:

Հանգամանքները պարզվում են:

Արագաչափի գողը հայտնաբերվեց

Սեպտեմբերի 12-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում էր ստացվել, որ տեխնիկական միջոցների գործադրմամբ գողացել են Դավիթ Բեկի փողոցում՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի դիմաց տեղադրված արագաչափը:

Նոր Նորքի քրեական հետախույզները, ձեռնարկելով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, պարզեցին կասկածվող անձի ինքնությունը: Բացատրական աշխատանքի շնորհիվ Երեւանի 32-ամյա բնակիչը ներկայացավ ոստիկանության Նոր Նորքի բաժին ու տվեց խոստովանական բացատրություն:

Նյութեր են նախապատրաստվում:

Գողությունը բացահայտվել է

Սեպտեմբերի 13-ին ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները Գեղանիստ գյուղից, գողություն կատարելու կասկածանքով, բերման են ենթարկել նույն գյուղի 30-ամյա մի բնակչի: Նա տվել է խոստովանական բացատրություն, որ ապրիլի 10-ին Արգավանդ գյուղում գողացել է «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի նվագարկիչ, վահանակի ցուցիչ եւ փոխանցման տուփի անջատման սկավառակ: Գողոնը հայտնաբերվել է:

Նախապատրաստվում են նյութեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Ինչպիսին պետք է լինի օրինակելի վարորդը

Ավտոմեքենա ունենալն, ինչ խոսք, առավելություն է, բայց հոգսաշատ եւ բարձր պատասխանատվություն պահանջող առավելություն: Եվ որպեսզի մեքենան պատուհաս չդառնա տիրոջ համար, անհրաժեշտ է, որ վերջինս փորձառու լինի. ցանկացած իրավիճակում մեղավորն, այսպես թե այնպես, մարդկային գործոնն է: Վարորդը մշտապես պետք է զբաղվի ինքնակատարելագործմամբ, քանզի հակառակ դեպքում առավել հավանական են խափանումները, վթարները եւ այլն: Եթե այն կարծիքին եք, թե մեքենան մի վայրից մյուսը հասցնելով՝ արդեն վարորդ եք, խորապես սխալվում եք: Շարժիչը գործի դնելը, փոխանցումները վարժ կատարելը, արգելակելը, կայանելը, շրջադարձը, հետընթացը, իհարկե, մեքենա վարելու կարեւորագույն տարրերն են, սակայն վարորդն այս ամենից զատ պետք է կարողանա ճիշտ գնահատել ճանապարհատրանսպորտային իրավիճակը, կանխորոշի հնարավոր վտանգը, ընտրի համապատասխան արագություն եւ միջտարածություն, ընդունակ լինի մեքենա վարել ճանապարհային բարդ իրավիճակներում եւ տարվա ցանկացած եղանակին: Անսարքությունները սեփական ուժերով վերացնելու հմտությունն էլ պակաս կարեւոր նախապայման չէ...

Էական նշանակություն ունեն վարորդի հոգեֆիզիոլոգիական հատկանիշները. նույնիսկ բժշկության տեսակետից նորմալ համարվող որոշ ֆիզիոլոգիական եւ հոգեբանական առանձնահատկություններ որոշակի պայմաններում լուրջ ազդեցություն են ունենում վարորդի գործողությունների վրա:

Վարորդն ինֆորմացիայի 90%-ը ստանում է տեսողական ապարատի միջոցով: Այդ իսկ պատճառով սեփական տեսողության առանձնահատկություններն իմանալը եւ վարելիս դրանք հաշվի առնելը շատ կարեւոր է: Ըստ ամերիկյան ակնաբույժների՝ վարորդների 35%-ը տեսողության լուրջ խնդիրներ ունեն, սակայն մեծամասամբ այդ մասին չգիտեն: Եթե նույնիսկ աննշան թվացող կարճատեսություն կամ հեռատեսություն ունեք, ապա անպայման ստուգեք տեսողությունը եւ ակնոց կրեք, վարելիս՝ հատկապես: Կան մարդիկ, որոնք թեեւ ցերեկը լավ են տեսնում, բայց տեսողության որոշակի անկում են ունենում երեկոյան ժամերին եւ գիշերը:

Մեքենա վարելիս վարորդը դիմացը

տեսնելուց զատ պետք է նկատի նաեւ աջ ու ձախ կողմերում զարգացող դեպքերը: Այս ունակությունն անհրաժեշտ է հատկապես քաղաքում, որտեղ կողային հարված ստանալու հավանականությունն ավելի մեծ է: Ստուգելու համար, թե որչափ եք տեսադաշտում պահում ձեր շուրջը տեղի ունեցող իրադարձությունները, կարող եք դիմել այսպիսի մի հնարքի. կանգնեք գլուխը ուղիղ պահած, հայացք գցեք մոտ 10 մետր հեռավորության վրա գտնվող առարկայի եւ ձեռքերը հորիզոնական բացեք:

Հետո սկսեք ձեռքերը կամաց մոտեցնել իրար: Եթե դրանք կհայտնվեն տեսադաշտում, մոտավորապես հաշվեք անկյունագիծը. եթե ստացված անկյունը 20 աստիճանից ավելի է, ապա ձեր տեսողությունն այնքան էլ լավ վիճակում չէ: Նման



դեպքում անհրաժեշտ է առավել ուշադիր լինել հատկապես ճանապարհի այն հատվածներում, որտեղ հնարավոր է կողքից սպասվող վտանգ՝ բակերից դուրս գալիս, ճանապարհները հատելիս, հետիոտնի անցումներում եւ այլն:

Հատկապես քաղաքում երթեւեկելիս հաճախ հարկ է լինում ուշադրությունը սեւեռել միանգամից մի քանի օբեկտների՝ լուսակիր, երթեւեկության մասնակիցներ, ճանապարհային նշաններ:

Այս կարեւորագույն ունակությունն էլ կարելի է ստուգել ներկայացված աղյուսակի միջոցով. փորձեք հնարավորինս արագ փնտրել 1-49 թվերը: Եթե դա ձեզ հաջողվի 60 վայրկյանից շուտ՝ գերազանց է, ավելի քան 80 վայրկյանում՝ վատ է:

Լսողությունը վարորդին անհրաժեշտ է նախեւառաջ անտեսանելի

26	2	48	7	32	16	29
4	19	25	11	3	35	12
37	46	20	28	10	41	15
22	43	5	49	23	8	44
13	1	17	33	40	21	36
9	14	39	6	18	45	27
31	47	38	42	24	30	34

վտանգը լսելու համար. շչակի, վազանց կատարող մեքենայի անվադողերի, շարժիչի, արգելակների ձայնը եւ այլն: Նորմալ լսողությամբ մարդն ի վիճակի է միջին բարձրության խոսակցությունը լսել 6 մետր հեռավորությունից:

Եթե ձեր լսողությունն այնքան էլ կատարյալ չէ, ապա դա փոխհատուցեք տեսողությամբ: Խուսափեք հատկապես հոծ երթեւեկության պայմաններում մեքենայում ձայնագրիչը միացնելուց, բացի այդ՝ հնարավորության դեպքում վարորդի կողմի պատուհանը բաց պահեք:

Շատերը համոզված են, որ ռեակցիան վարորդի ամենակարեւոր որակական հատկանիշն է: Այնինչ քիչ չեն դեպքերը, երբ գերազանց ռեակցիայի տեր մարդիկ ավելի հաճախ են հայտնվում վթարային իրավիճակներում. պատճառը, թերեւս, այն է, որ նրանք նախ գործում են ու հետո միայն մտածում: Վատ ռեակցիան կարելի է փոխհատուցել վտանգը կանխազգալու եւ ստեղծված վիճակը ճիշտ գնահատելու ունակությամբ:

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Սեպտեմբերի 13-ին ոստիկանության Մասիսի բաժնի համայնքային ոստիկանները Անդրանիկի փողոցից բերման են ենթարկել 47-ամյա մի տղամարդու, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 118-րդ եւ 353.1-րդ հոդվածների մեղադրանքով՝ դատաքննությունից խուսափելու համար:

◆

Սեպտեմբերի 12-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, բերման են ենթարկել 55-ամյա մի տղամարդու, որը հետախուզվում էր մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից դիտավորությամբ մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելու հատկանիշներով, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ:

◆

Սեպտեմբերի 12-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, Երեւանի Բագրատունյաց պողոտայից բերման են ենթարկել 55-ամյա Հրաչյա Թ.-ին, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 112 հոդվածի (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) 2-րդ մասի 6-րդ եւ 14-րդ կետերի մեղադրանքով:

◆

Ոստիկանության Մաշտոցի բաժնի ծառայողների անցկացրած բացատրական աշխատանքների շնորհիվ սեպտեմբերի 12-ին ոստիկանության Մաշտոցի բաժին է ներկայացել 20-ամյա Արայիկ Ա.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 112 (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) եւ 113 (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը) հոդվածների մեղադրանքով:

◆

Ոստիկանության Նոր Նորքի բաժնի ՔՀԲ ծառայողների անցկացրած բացատրական աշխատանքների շնորհիվ սեպտեմբերի 12-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանից բաժին է ներկայացվել 37-ամյա Վահագն Ա.-ն, որը մայիսի 2-ից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Տարոնի բաժնի ծառայողները Լոռու մարզային վարչության եւ Սեւանի բաժնի ծառայողների հետ համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ սեպտեմբերի 14-ին Սեւան քաղաքի Նաիրյան փողոցից ոստիկանության Տարոնի բաժին են տեղափոխել 58-ամյա Մարտին Ա.-ին, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 34-104 (սպանության փորձը) եւ 235 (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) հոդվածների մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 15-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո բերման է ենթարկվել Տաջիկստանի քաղաքացի, 24-ամյա Կադրիդդին Խ.-ն, որը 2016 թ. հունիսից հետախուզվում էր Տաջիկստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից՝ Տաջիկստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 244 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

Գողություն կատարողը հայտնաբերվեց

Սեպտեմբերի 9-ին ոստիկանության Մալաթիայի բաժին դիմած կինը հաղորդում էր տվել, որ սեպտեմբերի 5-ին վարագույրների խանութ-սրահ մտած անձն օգտվելով իր բացակայությունից՝ գողացել էր աշխատասեղանին դրված իր բջջային հեռախոսը:

Հաղորդումն ընդունելուց տասը րոպե անց ոստիկանության ՔՀԳՎ 2-րդ վարչության 2-րդ բաժնի ծառայողների եւ Մալաթիայի քրեական հետախույզների համատեղ ձեռնարկած միջոցառման արդյունքում գողությունը կատարած անձը հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Մալաթիայի բաժին:

42-ամյա տղամարդը տվել է խոստովանական բացատրություն:

Քննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Բացահայտում են Գուգարքի ոստիկանները

Ոստիկանությունը շարունակում է պայքարն ապօրինի ծառահատումների դեմ:

Սեպտեմբերի 9-ին ոստիկանության Գուգարքի բաժնի ծառայողները Վանաձորի Նարեկացու փողոցում, ապօրինի փայտանյութ տեղափոխելու կասկածանքով, ստուգման են ենթարկել Վանաձորի բնակիչ, 49-ամյա վարորդի «Զիլ-131» մակնիշի բեռնատարը: Մեքենան բեռնված էր մոտ 3 խմ փայտանյութով:

Վարորդը բեռի օրինականությունը

փաստող որեւէ փաստաթուղթ չի ներկայացրել: Հայտնել է, որ սեպտեմբերի 7-ին Վանաձորի 3-րդ մաս թաղամասից ոչ հեռու անտառում բենզասղոցով ապօրինի 6 կաղնի է հատել եւ որպես վառելափայտ ցանկանում էր տուն տանել:

Փայտանյութով բեռնված մեքենան տեղափոխվել է ոստիկանության Գուգարքի բաժնի հատուկ պահպանվող տարածք:

Փաստի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Ապօրինի թմրամիջոց է հայտնաբերվել

Սեպտեմբերի 6-ին ազգային անվտանգության ծառայության Արմավիրի մարզային վարչության աշխատակիցները, ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության, Արմավիրի բաժնի եւ սահմանապահ զորամասի ծառայողների հետ համատեղ, ստացված

տեղեկություններն իրացնելով, Բերքաշատ գյուղի 32-ամյա մի բնակչի խաղողի այգիներում, զննությամբ հայտնաբերել են ապօրինի աճեցրած կանեփանման 85 բույս:

Հայտնաբերվածը ուղարկվել է փորձաքրեագիտական վարչություն:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Թագավորի գրավոր դիմում
Սոփեստ փիլիսոփա / Կեռման
Ժողովն իրավազոր է / 100 քմ
Հացթուխի գործիք
Արեւելյան տիտղոս
Ֆիդայի
Սրտի ...
Ճարտ. կառուցվածք. տարր / Պարոն
Կաթիլ / Իտալացի նկարիչ
Ժակո, կակադու
Ճապոնական գիր / Կշիռ
«Պաղտասար աղբար», գործ. անձ / Թուն. նյութ
Բնագավառ
Սենդամթերք / Խոշոր ձուկ
Նոտա / Ավտոմեք. մաս
... Ոսկանյան
Ճնշման միավոր
Սահմանված գաղտնի բառ
Թմբուկ / Դանիացի ֆիզիկոս
«Սիրելի ...» (Մոպ.) / Պոմիդոր
Հայ թագավոր
«Հացին երգը» / Մեխ
Թակարդ
Հնագույն մարզաձեւ
Մեծ ասեղ / Բաճկոն
Վանք, Արցախ
Հարվածային նվագարան
... պտուղ
Իտալ. կինոդերասան / Լուսանկարչ. գյուտարար
Ընդդեմ բարու
«..., որ միշտ քեզ հետ է» / Թռչուն
Ջ. Գասպարյան / Ապուխտի խյուս
Ֆուտ. մրցավարի պիտույք
Աբու ... / Պարսկ. հին դրամ
Լատին. ց-ից հետո
Բահրեյն
Փայլուն խեցի / Եվրոպ. ազգություն
Լիտվայի դրամ
Խրծիթ
Մողես
«Պատմության հայրը»
Գիտ. աշխատակից / ... Իր Սեն / Սառա ...
Անթացուպ
... Քաչա / Շախմատ. աստվածուհին
Պաղլեղ / ... Խանզադյան
Գետ, Սյունիք / Շինանյութ
Քարաժայռ
Թեհրան / Նոյի միջնեկ որդին
Մի, Ֆա
Քաղաք, Աբխազիա
Ստորակարգ բույս / ... Մանշ
Մետաքս
Ելակետ
Ղեկավար ուղտ
Հրազդանի վտակ
Ցորենը կալսելու տեղ
Խորհրդ. բեռնատար
ԱՄՆ 37-րդ նախագահը / «...-73»
Խորովածի օջախ
Շախմատիստ քույրեր
Քերական. միջոցների համակարգ
Ասորական արքա
Ժող. փողային նվագարան
Ժամացույցի թռչուն
Ծոմապահություն
Քաղաք, Գերմանիա
Մերժեց Շամիրամին
«Վիլհելմ ...»
Երկրաչափ. մարմին
Աստղ, Կառավար համաստ.
Հագցվում է անասունի քթին
Անտիկ փիլիսոփ. հասկացութ.
Շվեդական քաղաք
Կոշիկի, ատամի ...

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Աստղագուշակ

20.09 - 26.09

Խոյ - Բարեհաջող շաբաթ է գործողությունների եւ նոր բարձունքներ նվաճելու համար:

Ցուլ - Իրատեսական նպատակներ դրեք ձեր առջեւ՝ հիասթափությունից խուսափելու համար:

Երկվորյակ - Խնդիրների ողջ պատասխանատվությունը մի վերցրեք ձեզ վրա: Հնարավոր է աշխատավայրում ձեր առջեւ նոր պահանջներ դնեն:

Խեցգետին - Ցանկալի չէ հապճեպ որոշումներ կայացնել հատկապես աշխատանքը փոխելու հարցում: Օգտակար ծանոթություններ հաստատելու շաբաթ է:

Առյուծ - Նոր հնարավորություններ կունենաք: Կզբաղվեք ձեր սիրած գործով, կշփվեք հաճելի մարդկանց հետ:

Կույս - Փորձեք հավաքել մտքերը եւ որոշել, թե ինչ եք անելու հետագայում: Հնարավոր են դրական փոփոխություններ կարիերայում:

Կշեռք - Մի մերժեք կողմնակի օգնությունը, ձեր ուժերն ու հնարավորություններն անսահման չեն: Վեճերի եւ խանդի առիթ մի տվեք:

Կարիճ - Շրջապատի հետ լիակատար փոխըմբռնման կհասնեք: Մասնագիտական գործերում կօգնեն գործընկերները:

Աղեղնավոր - Հույսը դրեք միայն ձեզ վրա. արջի ծառայություն մատուցողները շատ կլինեն, իսկ հետեւանքները դժվար կլինի ուղղել:

Այծեղջյուր - Հնարավոր են գործնական հանդիպումներ, որոնք կառուցողական կլինեն եւ նոր հեռանկար կբացեն ձեր առջեւ:

Ջրհոս - Սառը գլխով որոշումներ կայացրեք, մի տրվեք ռոպեական էմոցիաներին:

Ձուկ - Հանուն նպատակի պետք է զոհաբերեք ազատ ժամանակն ու ծրագրերը: Այն, ինչ անում եք, հաջողություն եւ եկամուտ կբերի:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1. g1-h2 a5:e5 2. h2:f4x

Խնդիր N2 1. e1-d2 c1:e3 2. d6-f8 f4:d6 3. f8:h4x

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 19.09.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: